ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԸ ԿԱՊԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Է ԱՆՑԿԱՑՐԵԼ

Օգոստոսի 29-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետն ընդունել է 54 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր երեսունյոթ, աշխատանքի տեղավորման՝ տասներկու, պետպատվերի շրջանակներում բուժում իրականացնելու, առողջարանային ուղեգիր հատկացնելու, ավտոտնակի կառուցման, ավտովթարից վնասված մեքենայի փոխհատուցման, վարկ վերցնելու հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից երեսուներկուսին տրվել է դրական լուծում, հինգ դիմում գտնվում է ուսումնասիրման փուլում: Հաշվառման են վերցվել աշխատանքի ընդունվելու մասին տասներկու դիմումները:

Դրական ընթացք են ստացել պետպատվերի շրջանակներում բուժում իրականացնելու և առողջարանային ուղեգիր հատկացնելու մասին դիմումները:

Մարզպետի հանձնարարությամբ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում ուսումնասիրվում է ավտոտնակի կառուցման, ավտովթարից վնասված մեքենայի փոխհատուցման, վարկ վերցնելու վերաբերյալ դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ